

ՍՈՆՅԱ ԽԱՂԱՏՐՅԱՆ ԱՏՐԱԼԵՑԿԻԵՆԵ

ԱՆԻԾՎԱԾԸ - 3

Գիրքը նվիրում են
իմ սիրելի դուստր Զրիստինային

ԵՐԵՎԱՆ



2016

ՀՏԴ 821,19-3 Խաչատրյան-Ստրալեցկիենե
ԳՄԴ 84 (5Հ)-4
Խ 282

Խաչատրյան-Ստրալեցկիենե Սոնյա
Խ 282 Անիծվածը-3: Արձակ / Ս. Խաչատրյան-Ստրալեց-
կիենե. - Եր.: Արմավ, 2016. - 500 էջ:

ՀՏԴ 821,19-3 Խաչատրյան-Ստրալեցկիենե
ԳՄԴ 84 (5Հ)-4

ISBN 978-9939-863-44-3

© Խաչատրյան-Ստրալեցկիենե Սոնյա, 2016
© Արմավ, 2016



ԱՆԻԾՎԱԾԸ 3 (Մի կյանքի պատմություն)

*Ամեն մարթ չի կանա խրմի՝
իմ ջուրըն ուրիշ ջրրեն է:
Ամեն մարթ չի կանա կարթա՝
իմ գիրըն ուրիշ գրրեն է:
Սայաթ-Նովա*

«ԱՆԻԾՎԱԾԸ» վեպը երեք տարբեր կանանց կյանքի պատմությունն է. նրանց ծակատագրերը իրար շատ են նման: Երևի ընթերցողը մտածի, թե մի կնոջ կյանքի պատմություն է, որովհետև իրադարձությունները շատ հմտորեն միացած են իրար: Երեք Սոնաներին գիտեցողները նրանց անմիջապես կձանաչեն:

Հիմա թող ինձ ներեն իմ ընթերցողները. «ԱՆԻԾՎԱԾ»-ի երրորդ մասում մնում է միայն մի կյանքի պատմություն:

Մի Սոնան հաջող ամուսնանում է ու իր ամուսնու, երկու երեխաների հետ գնում է Մոսկվա ապրելու:

Մյուս Սոնան ոչ մի կերպ չի կարողանում դասավորել իր կյանքը. փեսացուները զոհվում են: Նա վերադառնում է Լիտվայից Վրաստան և որոշում իր երկու երեխաներին միայնակ մեծացնել, այլևս չմտածել ամուսնության մասին:

Երրորդ Սոնան մնում է մենակ իր կյանքի շարունակվող ոլորտների մեջ: Հիշողությունները տանում են նսեմացնող, խարազանող ծանապարհներով...

Սոնայի եղբոր կինը իր կախարդ ընկերուհու՝ Կլավդիայի օգնությամբ բազմաթիվ խոչընդոտներ է ստեղծում նրա կյանքում: Սոնայի եղբայրը իր ընտանիքով ապրում էր Վիլնյուս քաղաքում: Նա անհավատարիմ էր իր կնոջը: Նեյյան լալիս էր ու գանգատվում, չէր ուզում բաժանվել ամուսնուց: Նրանք մի որդի ունեին: Սոնան ամեն կերպ աշխատում էր այդ կնոջն օգնել, իր եղբոր մոտ նրան պաշտպանում էր, խնդրում էր չթողնել ընտանիքը:

Սոնայի ամուսինը՝ Էլչինը, այդպիսի ժամանակ քմծիծաղում էր ու ասում.

-Դու իսկապես չես մտածո՞ւմ, որ Նեյյան քո անիվների տակ քար է դնում: Նա ինձ միշտ ուզում է հավատացնել, որ Քրիստինան Թոմի քույրը չէ, դու նրան ինչ-որ հայ տղայից ես ունեցել, չնայած ես նրան հակառակն եմ բացատրել, որ նայի, թե ե՛րբ է ծնվել Քրիստինան, ե՛րբ ես դու ամուսնացել...

-Չի կարող պատահել... Դա նրան ի՞նչ պետք է,-բարկանում էր Սոնան:

-Նայիր, չես հավատում ինձ, բայց ես իմ կարծիքը ասում եմ. քո եղբայրը մի օր քեզ կուզենա խաբել, տունը ձեռքիցդ առնել. նա սատանա է: Նրա կինն ամեն կերպ քո մասին վատ բաներ է ասում, կաչում է ինձ, մտածում է, թե ես նրա վրա ուշադրություն կդարձնեմ, նա խոզ է: Իսկ քո տղան՝ Թոմը, կոտոշավոր է, նրա կինը ուրիշ տղամարդկանց հետ քարշ է գալիս: Աղջիկդ՝ Քրիստինան, հիմար է, հավատում է իր ամուսնուն, որի մայրը իր տղային ուրիշ աղջկա հետ է ծանոթացրել: Այ կտեսնես՝ Թոմն էլ, Քրիստինան էլ կբաժանվեն...

Եվ նա ճիշտ էր. նրա ասածները կատարվեցին:

Նեյան միշտ կծում էր Սոնային.

-Դու շատ հարուստ ես, լավ ես ապրում, երանի՛ քեզ, նույնիսկ ուրիշի հաշմանդամ երեխային ես մեծացնում:

Սոնան ցավով լսում էր այդ կնոջ խոսքերն ու զարմանում. «Աստված իմ, ես ապրում եմ միսենյականոց բնակարանում, նույնիսկ պատշգամբ չկա... Ստիպված իմ լավ, խոսող թութակին տվել եմ ծանոթներիս, որոնք ապրում են սեփական տանը, որովհետև թութակը փետրահան էր լինում: Նրան ամառը օդը չէր հերիքում: Այո՛, հաշմանդամ երեխայի եմ մեծացնում, գիշեր-ցերեկ աշխատում եմ, որ դրամը հերիքի նրան պահելու համար, պետությունից ոչինչ չեմ ստանում, որովհետև որդեգրել եմ: Ինչքանով որ կարողանում եմ, օգնում եմ խնդրողներին, օգնում եմ Հայաստանում ապրող փոքր քրոջս ընտանիքին, օգնել եմ մորս, երբ դեռ նա կենդանի էր... Ո՛չ մեքենա ունեմ, ո՛չ հողամաս իմ եղբոր նման, իսկ Նեյան ինձ նախանձում է»:

Սոնան միշտ լռում էր՝ մտածելով, որ այդպես ապահով է: Ոչ ոք չէր մտածում, որ այդ ամենն անելը շատ ծանր էր, թանկ էր նստում Սոնայի վրա: Նրա անքուն գիշերների արցունքները ոչ ոք չէր տեսնում, միայն Աստված:

Լիտվայի Հանրապետությունում 1994 թվից 2010 թիվը շատ բաներ են փոխվում: Հիմա Լիտվայի Հանրապետությունը ՆԱՏՕ-ի հովա-

նավորության տակ է, Եվրոպական միության երկրների մեջ: Ինչպես ասում են՝ ազատություն, անկախություն են ստացել, բայց կախված են ուրիշ պետություններից:

Իսկ հասարակ ժողովուրդը ոչ մի լավ բան չի տեսնում: Սոնան հիշում է Կաունաս քաղաքը սովետական ժամանակներում. ամենուր ծառ-ծաղիկներ, շենքերի ձակատները ներկված, վերանորոգված: «Լայսվես ալեյա» պողոտան քաղաքի ամենահին, ամենագեղատեսիլ կենտրոնն էր, ասես հեքիաթային հրաշք լիներ: Իսկ հիմա՞, ոնց որ Գյումրին երկրաշարժից հետո (1988թ. դեկտեմբերի 7-ին): Ամեն ինչ հին է ու թափուր, շենքերը հնությունից ծոված են, պատշգամբները փշրվում են մայթերի վրա: Քանի՛-քանի՛ անգամ փլվել են անցորդների վրա, նրանց վիրավորել, որովհետև մարդիկ զբաղված են իրենց տանջող մտքերով. վերև չեն նայում, մտահոգ քայլում են, ոչինչ չեն տեսնում, ոչինչ չեն լսում...

Ծեր մարդիկ մարդավարի թոշակներ չեն ստանում: Ծատերը մինչև թոշակ ստանալու տարիքը չեն ապրում. ինֆարկտ, ինսուլտ են ստանում: Քաղաքի փողոցները լիքն են մուրացկաններով: Երիտասարդները աշխատանք չեն կարողանում ձարել Լիտվայում, գնում են Եվրոպական ուրիշ պետություններ, որտեղ նրանց շատ ցածր աշխատավարձ են վճարում: Նրանց վերաբերվում են շատ կոպիտ, ինչպես 1959 թվին նեգրերի հետ՝ Ամերիկայում...

Այս բոլորը Սոնային պատմում էր Թոմը, որը մի հանրապետությունից մյուսն էր տեղափոխվում՝ երազելով լավ վճարվող աշխատանքի մասին:

Երբ Սոնան հիշում էր Թոմի՝ առաջին անգամ Չեխոսլովակիա գնալու դեպքը, փշաքաղվում էր: Թոմին ընկերները համոզում են գնալ Չեխոսլովակիա՝ աշխատելու՝ հավատացնելով, որ այնտեղ մարդիկ լավ են ապրում, լավ վճարվող աշխատանք կգտնվի: Սոնան նրանց բացատրում է, որ չեխերը և սլովակները իրարից բաժանվում են: Այնտեղ դրությունը նույնպես ծանր է: Ռ՛վ էր լսողը:

Սոնան վճարում է Թոմի ձանապարհածախսը և մի քիչ դրամ տալիս, ինչքան որ կարողանում է, որ սկզբում՝ մինչև աշխատանք ձարելը, տղան քաղցած չմնա: Անցնում է որոշ ժամանակ: Ոչ մի լուր: Սոնան

սկսում է անհանգստանալ: Աստված լսում է նրա աղոթքները, և մի օր Թոմը զանգում է տուն՝ ասելով, որ վերադառնում են.

-Որ ողջ ու առողջ տեղ հասնեմ, ամեն ինչ կպատմեմ...

«Ի՞նչ են նշանակում նրա խոսքերը», -զգուշանում է Սոնան ու ավելի շատ աղոթում:

Վերջապես Թոմը տանն էր: Նիհարել, ցախ էր դարձել, անուժ, անարյուն: Ամենակարևորը՝ նա տանն էր:

-Ամեն օր եփում էինք բրինձ, որն այնտեղ ամենաէժան ուտելիքն էր: Սկզբում ոչ մի աշխատանք, ոչ մի ապրելատեղ. ուղղակի գիշերում էինք փողոցներում: Հետո մեզ խղճացին. քիչ վճարվելով՝ փողոցներն էինք մաքրում: Լիտվա Հանրապետության մասին ոչ ոք գաղափար չունեի, մեզ անվանում էին ռուսներ, որովհետև նրանց հետ վատ ռուսերենով էինք խոսում: Հետո բոլորս միասին ապրում էինք մի փոքր սենյակում, անասունների նման հատակին, երազում էինք տուն վերադառնալ, քիչ էինք ուտում, որ կարողանանք դրամ հավաքել ու տոմսեր պատվիրել...

Սոնան լսածին չէր հավատում, չնայած պատկերացնում էր, որ այնտեղ էլ վատ դրություն էր, բայց երիտասարդ տղաների հետ այդպես վարվելը նշանակում էր նսեմացնել նրանց: Ո՞վ էր մեղավոր: Երիտասարդությունն շտապում էր իր կյանքում ինչ-որ լավ բան ստեղծել ու չէր ստացվում:

-Սա քեզ համար թող դաս լինի, որ մյուս անգամ կարգին տեղեկություններ ունենաք, եթե գնում եք ուրիշ հանրապետություն աշխատելու: Գոնե դու ինձ պետք է լսեիր...

Սոնան ափսոսում էր, որ այն ժամանակ համակարգիչներ ու բջջային հեռախոսներ չկային, չնայած հեռուստատեսային ծրագրերում նորությունների ժամանակ այդ մասին խոսում էին:

...Շատ վատ ժամանակներ են: Սոնան, անդադար աշխատելով, կարողանում է դրամ հավաքել ու մտածել Հայաստան գնալու մասին: Երազում էր հանդիպել Համլետ Կարձիկյանին կամ Մուշեղ Գալշոյանին, որոնց հետ հանդիպել էր 1970 թվին: Հետո նամակագրություն էր ունեցել, ու նրա բանաստեղծություններից մի քանիսը տպագրվել էին

1975 թվին «Նոր ձայներ» ավանսխում: Մուշեղ Գալշոյանը խոստացել էր հրատարակել Սոնայի բանաստեղծությունների ժողովածուն:

Իհարկե, ահագին ժամանակ է անցել, բայց Սոնան միշտ էլ գրում էր բանաստեղծություններ, արձակ գործեր՝ իր կյանքի պատմությունը խառնելով երկու կանանց կյանքի պատմությանը, որոնք ապրում էին Լիտվայում շատ նման ձակատագրերով:

Այո՛, Սոնայի ձակատագիրը գնում է ուրիշ ճանապարհով, նրա կյանքը դառնում է դժբախտ փորձությունների մարտադաշտ:

Կառուսա քաղաքում Սոնան ընկերություն էր անում մի ընտանիքի հետ, որին շատ էր օգնել: Նրանց ընտանիքում երեխաներ չկային, ուր ասես գնացել էին, շատ գումար ծախսել, բժիշկները գլուխներն էին բացասաբար շարժել ու ասել.

-Ներեցե՞ք, բայց դուք երեխա չեք կարողանա ունենալ, ձեր բախտը չի բերել...

Սոնայի մոտ բուժվելով՝ ընտանիքը երկու գեղեցիկ ու խելացի աղջիկ ունեցավ:

-Սոնա՛, արի մեզ հետ, միասին Հայաստան գնանք,-մի օր առաջարկում է ծանոթ հայ կինը՝ Մարիամը,-դու վաղուց Հայաստանում չես եղել:

-Բայց հիմա իմ հարազատների հասցեն չգիտեմ: Երբ փոքր քրոջս՝ Աննային, նամակներ, ծանրոցներ, դրամներ էի ուղարկում, պատասխանում էր, իսկ հիմա իմ նամակներին չի պատասխանում, գուցե հասցեն փոխվե՞լ է,-վշտանում է Սոնան:

-Սկզբից մերոնց կգնանք, հետո մի կերպ քրոջդ հին հասցեով կգտնենք, հարևաններից որևէ բան կիմանանք: Մայրս շատ է ուզում քեզ տեսնել, իմ աղջիկները շատ ուրախ կլինեն քեզ հետ ճանապարհ գնալու:

Երկար մտածելուց հետո Սոնան համաձայնում է.

-Մեկ է, ինձ հարկավոր է գնալ Հայաստան, իմ գրվածքները գոնե ծեր հասակում կտպագրվեն:

2010 թվին՝ հուլիսի կեսերին, Սոնան Մարիամի և նրա երկու աղջիկների հետ Ռիգայից թռչում է Երևան՝ «Ձվարթնոց»: Ինքնաթիռը Ֆրանսիային էր պատկանում. Ֆրանսիայից թռչում էր Ռիգա ու Ռիգա-

յից՝ Երևան: Շատ մեծ էր «Բոհնգ»-ներից, ոչ մի սրտխառնոց, ոչ մի գլխապտույտ: Սոնան իրեն զգում էր ինչպես իր տանը՝ 11-րդ հարկում:

-Տեսնում ես,-ծիծաղում է Մարիամը,- դու 11-րդ հարկում ես ապրում ու չես զգում բարձրությունը: Երկար ժամանակ է, որ ինքնաթիռով չես ծամփորդել, հիմա առաջվանը չէ...

-Եվ իսկապես, տեխնիկան փոխվում է դեպի լավը, մենք հիմա ամպերից էլ վեր ենք թռչում, ու ես ինձ լավ եմ զգում... Օհո՛, ի՞նչ տեսարաններ են պատուհանից դուրս,-Սոնան իրեն զգում էր շատ թեթև, նրա տրամադրությունը բարձրանում է:

Ինքնաթիռի սրահում հայտնվում են սպասարկող տղան ու աղջիկը՝ իրենց աշխատանքային արտահագուստով: Նրանք հանքային ջրեր ու ուտելիքներ էին ծախում ուղևորներին:

-Ա՛յ քեզ բան, ջուրը անվճար պետք է լինի,-զարմանում է Սոնան ու իր մոտ մանր դրամ չի գտնում:

Մարիամը գնում է հանքային ջուր ու սնունդ իր աղջիկների համար: Սոնան խնդրում է նրան մանրել դրամը:

-Ես էլ չունեմ,-ուտերն է վեր քաշում Մարիամը:

-Լավ, այդ դեպքում կես բաժակ ջուր տուր, սրանց մոտ մանր չկար, քեզ հետո կտամ, ինձ հարկավոր է դեղահաբ ընդունել, գլուխս սկսում է ծանրանալ,-խնդրում է Մարիամին Սոնան:

Որքան մեծ եղավ Սոնայի զարմանքը, երբ Մարիամը չլսելու տվեց: Սոնան խնդրեց աշխատող-սպասարկող աղջկանից մի բաժակ սովորական ջուր: Երբ թռչում էին Երևանին մոտիկ, արդեն լուսանում էր, առավոտյան ժամը 6-ն էր:

-Օ՛, Սիսը և Մասի՛սը... Աստված իմ, որքա՛ն մոտիկ ու պարզ է երևում,-գոչում է Սոնան՝ մոռանալով Մարիամի ժլատությունը:

Նրան ոչ ոք չի պատասխանում:

-Ա՛յ քեզ բան... Մարիամին ի՞նչ մեղու է կծել,-զարմանում է Սոնան ու սկսում անհանգստանալ, բայց լռում է:

Արդեն ինքնաթիռը իջնում է «Ձվարթոնց» օդանավակայան: Մարիամի ձամպրուկները շատ ծանր էին: Սոնան օգնում է նրան տանելու: Մտնում են փաստաթղթերի ստուգման բաժինը: Մարիամը չգիտես ինչու իրեն Սոնայից հեռու է պահում:

«Բայց ինչո՞ւ,-մտածում է Սոնան,-ես ոչ մի կասկածելի ապրանք չեմ վերցրել, միայն իմ քրոջ երեխաների, թոռների համար նվերներ, քաղցրեղեն»:

Երբ փաստաթղթեր ստուգողը Սոնային հարցնում է, թե ինչ հասցեով է եկել, Սոնան շրջվում է Մարիամի կողմը և հարցնում.

-Մարիամ, ասա՛ քո ծնողների հասցեն, ես քեզ նախօրոք ասացի, որ մերոնց ձիշտ հասցեն չգիտեմ, դրա մեջ ի՞նչ կա...

-Տիկի՛ն, դե ասե՛ք, ժամանակ չկա,-Մարիամին է դիմում ստուգող տղամարդը:

Մարիամը չցանկանալով ասում է իր ծնողների հասցեն ու հետ քաշվում: Դա Սոնային բոլորովին դուր չի գալիս:

-Ինչքա՛ն ժամանակ է, որ Հայաստանում չէք եղել,-հարցնում է փաստաթղթեր ստուգող տղամարդը, որը «վիզա» էր բացելու:

-Օ՛... Երեսունհինգ տարի,-ժպտում է Սոնան:

-Հիմա քանի՞ ամսով եք եկել,-նորից հարցնում է տղամարդը:

-Մի ամիս ու կես, ոչ ավելի,-պատասխանում է Սոնան:

-Ի՞նչ լավ է, ես Ձեզ տալիս եմ երեք ամիս, լավ ման եկեք, կարոտներդ առեք, Ձեզանից՝ 40 դոլար:

Սոնան զարմանում է, լուռ վճարում է ու դուրս գալիս՝ մտածելով. «Ի՞նչ երեք ամիս, եթե իմ հետ գնալու տոմսը առած է»:

Հետո մոտենալով Մարիամին՝ հարցնում է.

-Դու ինչքա՛ն վճարեցիր «վիզայի» համար:

-20 դոլար, իսկ դո՞ւ:

-40 դոլար... Ինչո՞ւ ինձ հետ չեկար, չեմ հասկանում, քեզ ի՞նչ է պատահել... Ես կեսը հայերեն, կեսը ռուսերեն եմ խոսում, երևի ինձ լավ չեն հասկանում, գուցե դու ինձ օդանավակայանո՞ւմ ես թողնելու,-սկսում է բարկանալ Սոնան՝ տեսնելով Մարիամի սառը վերաբերմունքը:

Այդ ժամանակ մոտենում են Մարիամի քույրն ու ամուսինը, որոնք եկել էին դիմավորելու և Գյումրի տանելու: Մարիամի հարազատները բարևում են Սոնային. նրանք եղել էին Կաունասում ու բուժվել Սոնայի մոտ: Մարիամի ծանր ձամպրուկները, որոնք երեքն էին, նրա քրոջ ամուսինը քաշում է և հազիվ բարձրացնում իր մեքենայի հետնամասի խցիկը ու մոթմոթում.

-Չեմ հասկանում. Լիտվայից քարեր ես բերե՞լ, ոնց որ մեզ մոտ պակասում են...

Բոլորը հազիվ տեղավորվում են մեքենայում: Սոնան չգիտեր՝ ինչպես ոտքերը պաշտպանել արկղերից ու ինչ-որ կապոցներից:

-Մենք երևանի շուկայից շատ բաներ ենք առել, չմտածեցինք, որ Մարիամը նորից շատ ապրանքներ է բերել ծախելու...

Ամբողջ ճանապարհին Սոնան լուում է: Լուռությունը մեկ-մեկ խզում է Մարիամի քրոջ ամուսինը, որը մեքենան է վարում:

-Ո՞նց է կյանքը Լիտվայում, Սոնա՛:

-Ոնց որ դուք տեսել եք, ոչ մի նորություն դեռ չկա,-ասում է Սոնան:

-Հիմա ո՞ւմ տուն ենք քեզ տանելու:

-Հիմա Մարիամի հետ պայմանավորվել ենք գնալ նրա ծնողների տուն, իսկ հետո որևէ կերպ կկապվեմ քրոջս հետ: Ճիշտն ասած, հիմա «կույր» եմ եկել,-մտահոգված պատասխանում է Սոնան:

-Ա՛... Դա ոչինչ, այստեղի հեռախոսների կապի բաժնում նոր համարներ կառնես ու կզանգես,-ծոր է տալիս Մարիամի փեսան:

Չգիտես ինչու՝ Մարիամի քույրը լուում էր:

-Այո՛, Մարիամի հետ կգնանք, նա ինձ խոստացել է,-շեշտում է Սոնան ու աչքով անում Մարիամի աղջիկներին:

Իհարկե, արդեն Սոնան շատ էր փոշմանել, որ Մարիամին լսել ու նրա հետ ճանապարհ էր կտրել: Ավելի լավ կլիներ ուրիշ հայերի հետ, շատերն էին նրան առաջարկել, բայց, չգիտես ինչու, նա ավելի հավատաց Մարիամին, որովհետև նրա բոլոր հարազատներին օգնել էր, ինչով կարողացել էր:

Վերջապես Մարիամի ծնողների տանն են: Մարիամի մայրը՝ Անուշկան, Սոնային տեսնելով, միանգամից փաթաթվում է նրան, հետո թոռնիկներին ու Մարիամին:

-Ա՛յ կին, ուրեմն Սոնային ավելի շատ էիր սպասում, քան մե՞զ,-կծում է մորը Մարիամը:

-Այո՛, սպասում էի, ձեզ էլ... Ուղղակի ես մտածում էի, որ Սոնան կարող է որոշումը փոխել: Հիմա շատ ուրախ եմ, որ մեր տուն է եկել:

Մտտենում է Մարիամի հայրը՝ Արամայիսը, իհարկե, սկզբում փաթաթում է Մարիամին, թոռնիկներին ու հետո ձեռքը մեկնում Սոնային:

-Բարով ես եկել, Սոնա՛ ջան, քեզ զգա, ինչպես քո տանը:

-Շատ շնորհակալություն, վաղը կգտնեմ քրոջս,- ժպտում է Սոնան:

Հետո բոլորը միասին ծաշում են: Սոնան Մարիամի ծնողներին նվերներ էր բերել՝ իր պատրաստած դեղորայքից, որի համար նրանք շատ շնորհակալ եղան:

Մարիամը նրանց պատմում է Լիտվայի կյանքից, իր ամուսնու գործերից, երեխաների դպրոցական կյանքից: Երբ Մարիամի քույրն ու փեսան գնում են, Սոնան մոտենում է Մարիամի մորն ու ասում.

-Շատ կուզենայի այսօր բջջային հեռախոսիս համար առնել ու զանգել իմ փոքր քրոջը՝ Աննային:

-Վաղը քեզ ամենուր կտանեն, գլխի տակ մի՛ դիր, ես քո քրոջը լավ եմ ճանաչում: Նրա տանը հարմարություններ չկան, դու այնտեղ մնալ չես կարողանա: Մեր դռները քեզ համար միշտ բաց են,-խորամանկորեն ասում է Անուշկան, որը յոթանասուներկու տարեկան, արագաշարժ կին էր,-իսկ հիմա մի քիչ հանգստացի՛ր. ճանապարհից հետո հոգնած կլինես...

Սոնայի համար անկողին են պատրաստում մի փոքր սենյակում, որը լցված էր անփույթ դրված արկղերով, իրար վրա դարսված ներքնակներով, վերմակներով, բարձերով: Լավ էր, որ պատշգամբ կար: Սոնան բացում է դուռը, որ մաքուր օդ շնչի: Այնքան հոգնած էր, որ միանգամից քնում է:

Առավոտյան բոլորը հերթով լվացվում են ու նստում նախաձաշե-լու: Սոնան մի բաժակ թեյ է խմում՝ մի կտոր լավաշով ու պանրով:

-Այ՛ աղջիկ ջան, կե՛ր,-խրախուսում է Անուշկան,-հետո մենք շատ գործեր ունենք, շատ տեղեր ունենք գնալու...

-Ի՞նչ տեղեր: Նրան հարկավոր է հեռախոսի հարցը լուծել,-հարցնում է Մարիամը,-ես գնում եմ ընկերուհուս մոտ. նրա հետ պայմանավորվել եմ, դու խոստացար, որ Սոնայի հետ կգնաս:

-Գիտե՛մ, գիտե՛մ, ամենուր կհասցնենք,-շտապով վրա է տալիս Անուշկան:

-Տե՛ս, հա՛, քեզանից բաներ չհնարես, այս մարդու գործերին նա-յի՛ր առաջին հերթին, թող իր հարազատների հետ կապվի,-զգուշացնում է Արամայիսը:

-Ո՛հ, ո՛հ, ի՞նչ ես խոսում: Համ էլ դա քո գործը չէ, ձի՞շտ է,-դիմում է Անուշկան Սոնային, որը ուսերն է վեր քաշում ու մտածում. «Այստեղ ինչ-որ բան այն չէ. երևի ես ուրիշ տեղ եմ ընկել»:

Լախաձաշից հետո Սոնան սկսում է հագնվել: Անուշկան զարմացած հարցնում է.

-Այդ ո՛ր ես շտապում:

-Այո՛, շտապում եմ, հարկավոր է գնալ հեռախոսիս հարցը լուծելու, հարկավոր է մի կերպ քրոջս զանգել, լուր հասցնել իմ գալու մասին:

-Ա՛յ աղջիկս, ինչո՞ւ ես շտապում, ո՞նց որ մեզանից փախչես: Հիմա մեր հարազատներից կգան, նրանք անհամբեր քեզ էին սպասում: Ես նրանց խոստացել էի, որ կստուգես, կարող է և որևէ կերպ նրանց օգնես: Չես պատկերացնում, թե ինչքան հիվանդներ կան: Հետո կգնանք հեռախոսի կապերի բաժին...

-Այս ի՞նչ է կատարվում, Մարիամ, ես հո աշխատելու չե՞մ եկել, մի բան ասա մայրիկիդ, այդպես չի կարելի,-վշտանում է Սոնան:

-Օ՛յ, չգիտեմ, մայրս խոստացել է քեզ հետ գալ, ուրեմն, նրա հետ էլ կգնաս: Ես հիմա գնում եմ՝ իմ բերած ապրանքը ծախելու: Իմ հեռախոսի համարը նույնպես հարկավոր է փոխել:

«Օհո՛, ես նրան օգնեցի այդ բոլորը տեղափոխել, ոտքերս ու ձեռքերս ցավում են, հիմա էլ Անուշկայի համար պետք է աշխատեմ, այս ո՛ր եմ ընկել: Աստված իմ, ես բարի եմ, հավատացող, բայց ոչ հիմար», -մտածում է Սոնան:

Ու սկսվում է Սոնայի բուռն աշխատանքային օրը: Նրա քսան հարազատները անվճար ստուգվում են Սոնայի մոտ, ուղղակի Անուշկային բերում են կոնյակներ, քաղցրեղեն, մեղր, մրգեղեն... Առաջին օրը անցնում է շատ արագ, հաջորդում են երկրորդ, երրորդ... յոթերորդ օրերը:

«Ա՛յ թե ընկել եմ,-տխրում է Սոնան,-հարկավոր է հակառակվել, խորամանկել, թե չէ այստեղ կծառայեմ մինչև հետ գնալս: Ինձ քաղաքավարի, ուժով պահում են, ո՞նց որ հին ժամանակներում՝ նեգրերին: Հաց ու ջուր են տալիս ու աշխատեցնում, ահա թե ո՞վ է Մարիամը, նրա ծնողները: Ռ՛վ կարող էր մտածել, ո՞նց հավատացի սրանց...»:

Յոթերորդ օրը նախաձաշի ժամանակ Սոնան դիմում է Անուշկային այնպես, որ բոլորը լսեն.

-Սիրելի՛, հարգելի՛ տիկին Անուշկա, այսօր անպայման կգնանք զբաղվելու իմ գործերով: Եթե չես ուզում ինձ հետ գալ, ես մենակ կգնամ, հարցնելով մարդկանց՝ կգտնեն այդ անիծյալ կապերի բաժինը: Ամոթ է, որ այսքան ժամանակ չեմ կարողանում գալուս մասին լուր հաղորդել իմ հարազատներին:

-Ճիշտ է ասում, Անուշկա՛,-բարկանում է Արամայիսը,-ամոթ ունեցիր, այս ինչե՛ր ես անում, դու երևի հիվանդացել ես:

-Թող հիմա մեր հեռախոսից օգտվի,-վրա է տալիս Անուշկան անամոթաբար:

Եւ Սոնային ասել էր, որ տան հեռախոսը փչացել է, իսկ բջջային հեռախոսի դրամը վերջացել է, որ գնան կապերի բաժանմունք, ամեն ինչ կկարգավորվի...

-Տատի՛ ջան, տան հեռախոսը անջատված է,-հայտարարում է թոռնիկը՝ ժաննան:

-Չի կարող պատահել,-գոչում է Արամայիսը:

-Երևի տատիկն է անջատել,-սրախոսում է փոքրիկ թոռնիկը՝ Անժելան:

-Գուցե Մարիամի հեռախոսով կարելի է զանգել,-հարցնում է Արամայիսը՝ նայելով իր աղջկան:

-Ինձ մոտ էլ լիտվական համարներ են. դեռ ժամանակ չեմ ունեցել փոխելու,- պատասխանում է Մարիամը ու շտապով հավաքելով իր ապրանքները՝ դուրս է գալիս բնակարանից:

Սոնան երկու ձեռքով բռնում է գլուխը և քարանում տեղում: Եւ երբեք չէր մտածի, որ Մարիամը իր հետ այդպես կվարվի: Միթե Մարիամը չի մտածում, որ վերադառնալու է Լիտվա, ո՞նց է նայելու Սոնայի աչքերին: Հիմա այստեղ իրեն թագուհի է զգում՝ չհասկանալով, որ նսեմացնում է այն մարդուն, որ միշտ օգնության ձեռք է մեկնել, երբեք իրեն մենակ չի թողել ծանր պահերին:

«Ուրեմն ինձ բանտարկե՞լ են,-մտքում բարկանում է Սոնան ու սկսում հագնվել,-վատ է, որ Արամայիսը բջջային հեռախոս չունի»:

Անուշկան բարկացկոտ հայացքով նայում է Արամայիսին և նույնպես սկսում է հագնվել:

-Ո՛հ, ո՛հ, Ձեզ չեմ ուզում նեղություն տալ, ես մի կերպ հարցնելով կգտնեմ,-ուզում էր առարկել Սոնան:

Անուշկան ստիպված էր Սոնայի հետ դուրս գալ: Վերջապես Սոնան կարգավորում է իր բջջային հեռախոսը ու զանգում իր մոտ եղած համարով փոքր քրոջը՝ Աննային:

-Վա՛յ, այդ դո՛ւ ես... Ե՛րբ ես եկել, հիմա որտե՞ղ ես... Հիմա Արտյոմը կգա քո հետևից,-կակազելով, ուրախացած ասում է Աննան:

Երբ Արտյոմը՝ Աննայի մեծ որդին, հայտնվում է Անուշկայի բնակարանի շեմին, տանտիրուհին գունատվում է:

-Այդպես արա՞գ... Տղա՛ս, ավելի լավ է՝ վաղը եկեք:

-Ի՞նչ եք ասում,-կտրում է նրա խոսքը Սոնան,-ո՞նց կարելի է նրան հետ դարձնել, ես հիմա եմ գնում:

Սոնան արագ-արագ հավաքում է իր ծամպրուկը, իսկ Անուշկան փորձում է հետ պահել՝ ասելով.

-Հագուստներիդ կեսը թող այստեղ մնան, հետո կգաս տանելու:

-Անուշկա՛, մի՛ վհատվիր, դեռ մենք կհանդիպենք: Մնացեք բարով, շատ շնորհակալություն ձեր հյուրասիրության համար:

Անուշկային ոչ մի կերպ չի հաջողվում Սոնային կանգնեցնել: Մխիթարվում է նրանով, որ Սոնայի հետդարձի տոմսը իր տանն է մնում, որովհետև Անուշկան շատ խոր տեղ էր պահել. Սոնան միանգամից չի գտնում:

Ճանապարհին Արտյոմը հարց ու փորձ է անում Թոմից, Քրիստինայից, Կառոլինայից: Նա եկել էր իր ընկերոջ մեքենայով: Սոնան Արտյոմին տեսել էր շատ փոքր հասակում, իսկ հիմա նա կարգին երիտասարդ էր, ամուսնացած, կին ու երեխաներ ուներ:

-Արտյո՛մ, դու այն չար, անկարգ, չլսող, փորձանքոտ տղամ՞ն ես,- ծիծաղում է Սոնան,-հիմա դու բոլորովին ուրիշ ես, բայց քո մեծ, սև աչքերը դեռ վառվում են դեմքիդ վրա, ասես ուր որ է՝ նորից չարություն կանես: Իսկ ո՞նց է Սվետլանան, նրան օրորոցում եմ տեսել, Լիլիթին նամակներով գիտեմ, Անդրանիկին՝ նկարներով... Ա՛յ թե ժամանակը անցնում է,-հոգոց է հանում Սոնան:

Վերջապես ավտոմեքենան կանգնում է քույր Աննայի տան դիմաց, եթե դա տուն է կոչվում: Դրսից ասես մեծ խրճիթ լինե՛ր՝ երկաթյա

դարպասներով: Մտնում են ներս: Նրանց է մոտենում բզկտված մազերով մի շուն, կեղտոտությունից գույնը չի երևում, տխուր է ու նիհար: Սոնան Արտյոմի հետ քարից աստիճաններով բարձրանում է վեր և մտնում տուն:

Տունը դեռ լրիվ կառուցված չէր, չմաքրված, փոշու մեջ կորած, հին կահույքով: Գզգզված մի կատու, սպիտակ, եթե այդպես կարելի է ասել, սև մորթով, անմիջապես մոտենում է Սոնայի ոտքերին ու, նրանց քսվելով, նվնվում է.

-Միաո՛ւ... միաո՛ւ... միաո՛ւ...

-Բարև, կատո՛ւ, ի՞նչ տամ քեզ, ի՞նչ ես ուզում:

-Ա՛... Բանի տեղ մի՞ դիր, կատու է, էլի,- այս ասելով՝ Արտյոմը ոտքով հեռու է քշում կատվին:

Սոնան նայում է հին սեղանի տակ դրված դատարկ ու կեղտոտ ափսեին: Սեղանի վրայից վերցնում է մի բաժակ ջուր, որտեղ մի քանի անկենդան ձանձեր կային, լցնում է ափսեի մեջ: Կատուն միանգամից սկսում է չփչփացնելով, ագահորեն խմել ջուրը: Այդ ժամանակ դրսից հայտնվում է Սոնայի քրոջ ամուսնու մայրը՝ տիկին Ռոզան, որը ուրախացած կանչում է.

-Օ՛յ, Սոնա՛ ջան, վաղուց քեզ չեմ տեսել, սև մազերդ, գանգուրներդ սպիտակել են...

-Ծերանում ենք, իսկ Դուք բոլորովին չեք փոխվել, նույն Ռոզան եք,-ասում է ծիծաղելով ու փաթաթվում նրան:

Հետո, նայելով Ռոզայի արևահար դեմքին, մտածում է.

«Եվ իսկապես, հիմա Ռոզան ութսունչորս տարեկան է, բայց երեսունհինգ տարի առաջ էլի նույնն էր՝ շատ նիհար, ծուռ թիկունքով, մազերը սև, հավաքած ծոծրակի վրա, արևահար, ուժեղ ձեռքերով, իսկ աչքերը փայլում են առողջությամբ»:

-Օ՛, այս ո՞ւմ եմ տեսնում,-լսում է Սոնան իր քույր Աննայի ձայնը ու շրջվում:

Քույրերը գրկախառնվում են, համբուրվում, արցունքոտվում:

-Այսքան տարի իրար չենք տեսել,-գուրգուրում է քրոջը Սոնան, ուսումնասիրում,-Աննա՛, դու շատ չես փոխվել, քո՛յրս, նույնիսկ ձերմա-կած մազեր չունես:

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՆԻԾՎԱԾԸ 3	3
ՄԻՔԵ ԻՄ ԿԻՆԸ ՈՒՐԻՇ ՄՈԼՈՐԱԿԻՑ Է	141
ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՄԱԿԱՐԳԳԻ ԵԹԵՐՈՒՄ	237
ՔԱՈՍ	277
ԴԵՏԵԿՏԻՎ ՆՈՒԼԻՍԸ	329

ԲԱՆԱՍԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեսնում եմ՝ զարունն է եկել	410
Իմ սիրո երգը տարար դու քեզ հետ	411
Մուտ է արդեն	412
Ճերմակ հուշերիս	413
Օ, անծայրածիր երկինք	414
Ով որ քանդում է	415
Կախարդի հոգին	416
Անմեղ արյունը	417
Դրամը	418
Առանց սիրո	419
Հիվանդասենյակում	420
Իմ խոր վշտերի, զգացմունքների	421
Ծնված օրից	422
Ուզում եմ դառնալ	423
Կգա ժամանակ	424
Երազներս կուտակվեցին	425
-Տո՛ւկ, տո՛ւկ,- թակում է գերանդին ձեռքին	426
Ես հիմա գիտեմ	427
Դու ծերացել ես հոգով, իմ անգի՛ն	428
Կարոտել եմ բույրերին քո	429
Ծերությունը ցավ է օտար	430
Ինձ անծանոթ է	431
Վշտերիս դեմքը ծածկված է կապույտ	432

Իմ սերը ծով է	433
Շատ եմ տխուր ես	434
Կարմիր լուսինն է	435
Ինչպե՞ս կարող եք	436
Նայի՛ր աչքերիս ու դու կտեսնես	437
Արի մենք հսկենք	438
Թե հանկարծ այսօր	439
Եղեռնի 100-ամյակին	440
Դեռևս սիրոս	441
Անորոշության շեմքն է սա	442
Ուզում եմ ծերանալ ես հոգով	443
Ակրոստիքոս	444
Աշունը՝ նախշուն	445
Առաջին ձյունը	446
Ամեն օր խոսում եմ	447
Ես մի խենթ, թափուր	448
Երկնքում տեսնում եմ	449
Սուտը անհիմք է ու ոտներ չունի	450
Տեղ-տեղ կարկատված	451
Քայլե՛ք իմ կողքից, դրե՛ք ոտքերդ ոտնահետքերիս	452
Թե փչեմ վրադ	453
Սայաթ-Նովային	454
Հանուն ինչի՞ է	455
Ի՛նչ լավ կլիներ	456
Ես էլ չեմ կարող երգեր արարել	457
Ինչ որ զգում եմ	458
Հարդագողի ձանապարհը	459
Կյանքի բեմերում	460
Մենություն, դու կույր աչքի պես	461
Արգելված սերը	462
Արևածաղիկներ	463
Կապույտ միրաժի	464
Իմ կտակը	465

Թանկացնում ենք կյանքը, սերը	466
Չինվորին	467
Մենք անցորդներ ենք	468
Եթե ես ծնվեմ	469
Չյան փոթորիկ է	470
Շատ ձմեռներ եմ տեսել ես կյանքում	471
Իմ պատուհանից տեսնում եմ	472
Դառն հիշողություն	473
Ձյուն, ծածկի՛ր իմ կյանքի	474
Ասե՛ք, որտե՞ղ կան	475
Ժամանակ սպանելը	476
Մեր երեխան	477
Աստված ինձ տվել է	478
Քամուց կքվել եմ	479
Ես սովորել եմ	480
Աստվա՛ծ իմ, կյանքիս անիվը	481
Հայերը միայն մի Աստված ունեն	482
Աղոթք	483
Քսան դարեր են սլացել, անցել	484
Դու ինձ գրել ես	485
Դոփում են ձիերը սանձարձակ	486
Դու փարվեցիր ինձ ջերմ ու սրտանց	487
Ես սիրում եմ քեզ	488
Ընկուզենու տակ	489
Խարույկ ես վառել ծովափի	490
Ինչպիսի՞ սիրով ու լուռ ջերմությամբ	491
Կարդացել ենք շատ առակներ, դեպքեր	492
Այս դարում կատուն	493
Օձը իր տիրոջ	494
Ներքին թշնամին	495

ՍՈՆՅԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ-ՍՏՐԱԼԵՑԿԻԵՆԵ
ԱՆԻԾՎԱԾԸ - 3

СОНЯ ХАЧАТРЯН - СТРАЛЕЦКИЕНЕ
ПРОКЛЯТЫЙ - 3

Խմբագիր՝ Ռոզա Հովհաննիսյան
Ձևավորումը՝ Արմինե Քոչարյանի
Համակարգչային շարվածքը՝ Նունե Նիկողոսյանի

Տպագրությունը` օֆսեթ
Չափսը` 60x84 1/16
Ծավալը` 31.25.0 տ.մ.
Թուղթը` օֆսեթ 70 գ. 1.3 ծավալային կշռով
Տառատեսակը` Ghabuzian Tigran



ИЗДАТЕЛЬСТВО **АРМАВ**

Ք. Երևան, Շիրազի 24 շ. 48 բն.
հեռ.՝ 34-73-35
Էլ.փոստ՝ armav-hrat@mail.ru

Г. Ереван, ул. Шираза 24 д. 48 кв.
тел.՝ +374-10-34-73-35
Email: armav-hrat@mail.ru